ԺԱ.

ԱՂՕԹՔՆԵՐ.

I.

ՀԱՑ ԹԽՆԼՈՒ ԱՂՕԹՔ.

Ալաշկերտի բարբառով *).

Հաց դեռ չթխած

Եա՛ հայ, հայցի հրեշտակ,
Արդար եզան վաստակ,
Դու բարեխօս էղնիս առ Աստուած,
Որ գայ մզի ամեն աւուր հաց,
Մենք լէ տանք աղքատներուն, անճարներուն.
Որ վարձք էղնի մըր հոգուն,
Որ էղնի վարձք,
Մըր հոգուն լէ դարձ։

Թխել սկսածին պես.

—Եա՛ տաք հաց ու պաղ խմոր. Դու բարեխօս էղի յըմնօր,
Որ Աստուած հասնի յըմեն, Խարիբ, խուրբաթներուն,
Ցընկած ու նեղածներուն, յէրունաց ու ճուչունաց,
Անճարաց ու անօգնականաց։ Ցըմնու սատաղէն իզա տան
Ջարն բարի դարձուս, ամէն։

*
* *

*) *Աղօթքներ եւս բազմաթիւ են. զանազան հիւանդութեանց վրայ կաղօթեն, յատուկ մարդոց Աստուծմէ շնորհուած է աղօթել. որով ոչ ոքի չեն սովորեցներ. իսկ եթէ լուրջ հետեւողութիւն լինի հաւաքելու, կարելի է կարեւոր աղօթքներ երեւան հանել։*

ՍԵՐՄԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԻՆ.

Օրհնեալ Տէր մեր, Յիսուս Քրիստոս,
Հայր մեր որ յերկինս ես, ...
Իդա մէկ բուռ էրունաց թռչունաց ղամար
Իդա մէկ լէ անճար աղքրտի ղօճախի ղամար,
Իդա լէ իմ ճժկներու ղամար.
Դու ամօթալի չէնիս, Աստուած.
Դու իմ տուն ու դուռ չէն պահէս,
Հայր Աբրամու օրհնիթք թափիս էս արտին,
Կանչըցու, ով աստուած, բարով խերով քաղինք,
Դուշման վըր մղի չի՛ ծիծղըցուս, Աստուած։

ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ.

Աստուած, դու ազատես,
Գիշերուայ ցերեկուայ փորձանքէն.
Հում լեզուեն, հոտած բերնէն,
Կրճալը ատամէն, անօրի ճառէն։
Ջուր ու բուխճանէն, յանկարծակի փորձանքէն,
Իմ մեղացէն, դառն դժոխքէն, պարտքէն ու փոխէն։
Աստուած, դու ազատես քարէն ու ջրէն,
Կրակէն ու սրէն, թրէն, դժոխքէն։
Աստուած, դու ազատես սարէն ու քարէն,
Գէլէն ու գազանէն, օձէն ու վուշապէն,
Գէլէն ու ջանավարէն,
Սել ու սելաւէն, բօփէն ու բուրճքէն;
Կոխ ու կռուանքէն, դառն դժոխքէն,
Պարտքէն ու փոխէն։
Աստուած, դու ազատես թօնէն ու թնջանքէն,
Կարկուտէն ու կայծակէն, ծաղկէն ու կարմրուկէն,
Պատէն, պատառակէն, քարէն, քարասպանէն,
Փէտէն,, փէտուրանքէն, ձնէն, ձմերանքէն,
Ցրտէն, խյամարքէն, իմ մեղացէն։
Աստուած, դու տաս աշխարհի խաղաղութէն,
Իմ մեղաց թողութէն,
Պարտքէն ու փոխէն ազատութէն.

Մահին թանկուտէն, հացին յէժնուտէն,
Թագաւորաց համբերուտէն,
Մղի ուրախուտէն, արժանի էնես, ամէն։

ՔՕՍ ՎԷՐՔԻ ՎՐԱՑ ԱՂՕԹՔ.

Աստուածածնի մատով Լուսաւորչի խաչով
Արտ ա ցաներ, յափն ա բուսեր,
Մեր տէրն ա էկեր, տեսեր, զարմացեր,
Ասեր ա,—Չիք էս, չքանաս, ապառած քարեր բուսանաս։

*
* *

ԿՈԾՈԾԸ ԼԱԻԱՑՆԵԼՈՒ.

Նոր-նոր, նոր աղիս, կոծոծ յէլէ կուտայ գլխ,
Կտրայ, թալ, չուտայ գլխ։

Չ.

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ.

Վանայ բարբառով

Պախապան խաչ խրեշտակ, եօթ գլեօխ աւետարան,
Ութը գլեօխ սաղմոսարան, տասնւերկու փող չարական,
Մայր Աստուածածին, օգնական ու պախապան:
Մէյ չում կեայ. գլեօխ չկեայ,
Մայր Աստուածածնայ փրդին կեայ,
Կալի, կապի, վեր մե չկեայ.
Եա՛ պատուական խաչ, եա խէրուան տընդառաջ,
Տէւ քշեօ. պէրեօ առաջ.

ՊԱՆԴԽՏԻ ՀԱՄԱՐ ԱՂՕԹՔ.

Ցմէն կարիպ կուրպերին յաջողութիւն տուող Աստուած,
Կարիպիս յաջողութիւն, ջանին սաղութեն տաս:
Զեօրաւոր տէր, իմ կարիպիս ազատ արա,
Գիշերուայ փորձանքներէ, ջուր ջրհեղեղէ, աւուր չարից.
Քեաղցրիկ տէր, բարի յաջողութիւն տաս,
Կարիպին խասուցես, ուր խօր խէրանին,
Վեր ուր ձէթկիկ ձգերուն,
Մեղաւոր սրտով, անարժան պիրնով քե կը կանչեմ.
Աստուած, իրես մի դարձուցեր ընձնից.
Օղորմութեն դուռը բաց, քեօ դիւան դարկեախից
Զիկ չղրկիս, Աստուած:

ԾՆՆԴԿԱՆԻ ԱՂՕԹՔՆԵՐ.

Ալալոս Թալալոս.
Ծննդկանի տէր, սուրբ Կիրակոս,
Մէյն Յիսուս, մէյն Քրիստոս,
Մէյն հնձանայ ս. Աստուածածին:
Ելանք սարով, շրջուանք ձորով.
Իմ տէր տասց.—Դոր կերթաս բարով.
—Կերթամ դուռն խիւընդին, էրդիս ծննդկանին՝
Զուր իգա գալոց, չար խափանի:

*
* *

Ըկան իրեք ձիաւոր,
Մէյն էր Յիսուս, մէյն էր Քրիստոս՝
Մէյն հնձանաց սուրբ Աստուածածին,
Ելան սարով, շրջուան ձորով,
Քառասունու խինգ խաչալամով,
Խարցուցի,—Իմ տէր, դո՞ր կերթաս բարով.
—Էլեմ էրդիս աղոցկանին,
Թանլիս Թալիմ պեօլոր բարձին,
Ձվախենայ սիրտը փորին, չուրին գալոց Քրիստոսին:

* *
*

Հիւանդի վրայ.

Մեղայ իմ տէր, մեղայ իմ տէր. մեր մեղացն ի։
Փեաղցրիկ տէր, քեաղցրիկ Քրիստոս,
Տիւ առողջացուցես, իրեաս սև ու մոխիր եմ։
Կզուեմ քեզ ոտքեր, ճար արող տէր.
Իմ անճար խիւնդին ճար արա։
Կզուեմ քեզ ոտք պաչեմ, դառնամ քեզ ծեռ,
Ումուն արող Աստուած, ումուն քեզ եմ արե,
Հիւիս (խնդիրքս) քեզնով ի։

*
* *

Նորածնի համար աղօթք.

Ամաճ իմ խաթուն Տիրամէր, գրկանոցիդ մեռնեմ,
Բարեխօս ըլես առ Աստուած
Քեզ մէյ բուրակի խաթրի համար,
Զիկ մխիթարանք պախես իմ գրկանոց։

*
* *

Ծամեր սանցրելու աղօթք.

Աստուած օղորմի էն խալեորին.
Օր եօթ դիր էրուսաղէմ գնաց,
Խառնած մազին՝ խառնած կաժին՝
Ազապ աղջկայ բաղդին՝ օրբեերի հարսին՝
Ցիստկութեն ուզեցին։

*
* *

Աչքեն օիւղը հանելու.

Խաղ էս, խալի, խիլ է, էլի.
Աստուածածնի ճկութն ինե։

3.

ԱՆԹԱՆՕԹ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ.

Սուրբ Կարապետու աղօթք.

Խլաթայ բարբառով *)

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն. Հայր մեր. ...

---

*) Ասել է Ասլի Սարգսեան Մելիքեան. խլաթայ Կարմունջ գիւղից.

Թէ Եազար ես, թէ գէշ աչք ես, թէ գէշ Եիաք ես,
Թէ քաղցր Եիաք ես, թէ նորէն ես, թէ փլէն ես,
Ինչ ցաւ որ ես. քեզի երդուեցընեմ՝
Խաչ ու խաչափայտն Քրիստոսին,
Բուրվառն ի Ցարոնին, մատոնին Սողոմոնին,
Քնարն ի Դաւթին, տախտակն Աստուածածնին.
Զաւմբարն Տիրամօր, չորս գլուխ աւետրան,
Ութ կարգ շարական, ին դաս հրեշտակ,
Աթոռն Աստուծոյ, Աստուած ճշմարիտ։
Սուրբ կարապետու տուկն ա,
Սուրբ Կարապետու ձեռքովն, ելցես գնասցես։

Գ.

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՂՕԹՔ.

Ալի բէկլու գիւղի բարբառով *).

Մեղայ իմ Աստուած, մեղայ ցանկամ, (երեք անգամ)
Փառք քեզ, Աստուած. (երեք անգամ)
Մեր ստեղծող Աստուած, մեզ օգնես,
Ազատես էս մեղքից մեր խղճալի հոգին,
Իմ ստեղծող, ով սուրբ լէքը սկիհ,
Ով սուրբ եկեղեցի, ով քաղցր Աստուածածին,
Ազատես մեզ ամենայն մեղքից,
Ով սուրբ պաշտօն—պատարագ, սուրբ սեղան,
Ամենայն նեղութիւնից ազատես մեզ,
Ազատ պահես օրէ խաբից, օրէ ցաւից, օրէ փորձանքից,
Մեզ, ով Տէր մեր, Աստուած,
Ով սուրբ պաշտօն—պատարագ,
Դու մեր թագաւորներին հաշտութեն տաս,
Աշխարքին խաղաղութեն տաս,

---

70 տարեկան այրի պառաւ. Շատո իրիցանց տուն հարս գնացած. այժմ բնակւում է Կարսի Նախիջեւան գիւղում. ունի զաւակներ եւ թոռներ. Ամուսինն էր Տէր Ղուկաս, որի հայրը եւ այլն քահանաներ են եղել. Ասլին դոցա ցեղից 7 քահանաների օծումը տեսել է. երկու անգամ գնացել է ս. Կարապետ. Քանի դեռ Տէր Ղուկասը ողջ էր, Ասլին իրաւունք չունէր աղօթելու. այն օրուանից, երբ Տ. Ղուկասը վախճանուել է, վերջինս իրաւունք է ունեցել աղօթել հիւանդների եւ զանազան ցաւերի վրայ. Գ. Հ.

*) Գրի առած է Տ. Գէորգ Այվազեան.

Հացին էժանութեն տաս,
Մահին թանգութեն, մեր հոգուն փրկութեն,
Մեր ժառանգներին բարութեն։

*
* *

Հիւանդի վրայ.

Իմ Աստուած, օգնես տկարին,
Ղօպչաղ, սուրբ Նշան, դու օգնես,
Իմ անուշ սուրբ Աստուածածին, դու օգնես,
Սուրբ Գրիգոր լուսաւորիչ, դու օգնես,
Սուրբ Ամենափրկիչ, փրկես էս նեղեալին էս ցաւից.
Իմ Աստուած, բոլորի գլխաւոր Աստուած, դու օգնես։

*
* *

Մկնասամ գրելու աղօթք.

Կապել եմ գլխքն ի ծառէն,
Կապանօքն Պետրոսի և Պօղոսի,
Այլակերպութիւն Քրիստոսի.
Զոր այլակերպեցաւ ի Թափօրական լերին
Եւ լոյս ծագեցաւ տիեզերաց.
Յանուն հօր և որդւոյ, և հոգոյն սրբոյն, ամէն։

*
* *

Սուրբ Ստեփաննոս Նախավկէն.
Ինքը ճերմակ ձին ճերմակ.
Ընկաւ ծովը, ծովը ճերմակ.
Կալի կչտով անց կացաւ, կալից մի խուրց պակասեց
Խրձից մի դան պակասեց.
Ասեղը երկաթ, ջուրը պողպատ, սրտի կպած, պո՛կ արի։

5.

ԾՆՆԴԿԱՆԻ ԱՂՕԹՔ.

Ալաշկերտի Մանկասար գիւղի բարբառով *)

Ծրագ—ճրագ ճշմարիտ,
Խաչ զաւազան մարտիրոս, մեր սիրելի Քրիստոս,
Ցէլաւ մտաւ ծով ծիրանայ, յէլաւ մտաւ աշխար Սվրանայ,
Թաժա լացի խատ գիգայ, յէլէք տէնէք ով գիգայ,

*) Առել է Նուպար Գրիգորեան։

Մէկ Ցիսուս, մէկ Քրիստոս,
Մէկ յընձանայ Աստուածածին,
Բալնիք թալենք վերև բարձին, մանգաղ թալինք օրօրոցին.
Զընք ի Քրիստոս պայ չարոց խափան։

*
* *

6.

ԾՆՆԴԿԱՆԻ ԱՂՕԹՔ.

Բայազետի բարբառով.

Թազա հացի հոտ ա գալի, յելէք տեսէք որն ա գալի,
Իրէք բոզ ձիաւոր ա գալի, Մէկ Ցիսուս, մէկ Քրիստոս,
Մէկ Տիրամայր Աստուածածին.
—Տէր իմ, ուր կերթաս, առաջ բարով,
—Դուռն հիւանդին, յերդիս ծննդկանին.
Զնջիլ թալին բոլոր բարձին, չբոլորի սիրտը փորին,
Զպապանձուի լեզուն բերնին, մինչ գալոց Քրիստոսին։

*
* *

Սև դարն եմ դացե, սև օձն եմ կթէ,
Պանիրն եմ դեղե, չար աչքին են կերցրե։
Չար աչքը չար փուշ. չար փուշը կրակ,
Կրակն անատակ ծովեր։
Չար մարդից, չար սհաթից, չար էքից, չար որցից,
Չար դրկրցից, չար հայից, չար թուրքից,
Չար աչքը չար փուշ, չար փուշը կրակ,
Չար կրակն անատակ ծովեր։

7.

ԾՆՆԴԿԱՆԻ ԱՂՕԹՔ.

Վաղարշապատի բարբառով.

Թազա հացի ֆոտ ա գալի, վերէք տեհէք ով ա գալի։
Մէկ Ցիսոս, մէկ Քրիստոս, մէկ կոյս Աստուածածին.
Հարցրեցի.—Ցուր էք էթում,
Ասին.—Էթանք դուռ ծննդկանին,
Բալնիք քցինք բարձն ի բոլոր, չվախենայ սիրտը փորին։

8.

Ա Կ Ն Ա Հ Ա Ր Ի.

Բաբերդի բարբառով 1).

Մէյրամ անա հողաբեր, ոսկի աթոռն էր քե տէր,
—Ի՞նչ կուլաս, ինչ ճորաս,
—ինչ լամ, ինչ ճորամ. յիտձուն ձիս, յիտձուն ջորիս։
Գնա՛, մոխր Ցիսուս բաղչան՝ իրեք ուռենի կորէ.
Զաք աչքը չար խոստկի. չար ամենակոլ,
Պէսպէսական ցաւի դեղ։
Դժողքին դռնէն անցուր. դլխախին զուռը ցցուր,
Իմ հոգիս ալ հոն հանգուստէ։
Սուրբ Սարգիս զօրավորին. սուրբ Գէորգ ձիաւորին.
Սև օձ բռնեցին. կթեցին մերեցին, սև ձձում զարկեցին,
Սև կարագ հանեցին, չար աչից դեղ էրին։
Զար աչքին ի չար փուչ, չար փուչն ի կրակ,
Աստուած էնէ մեր հիւնդին ճար։

9.

ՑՂԻ ԿԱՆԱՆՑ

Մշոյ բարբառով *).

Էկան իրեք ձիաւոր.
Մէկ բօզ ձիաւոր, մէկ սև ձիաւոր, մէկ կարմիր,
Մէկ չորեքշըմուտ, մէկ ուրբթմուտ,
Մէկ կիրակմուտ ծննդկանի պահապան։

10.

Ա Կ Ն Ա Հ Ա Ր Ի.

Օսակաճի բարբառով.

Անուն հօր, և որդու, և հոգուն, սրբու, ամէն.
Զար աչքը չար փուչ, չար փուչը կրակ, կրակ-անատակ ծովեր։

---

1) Ասած է Տիկին Զարուհի Գազանճեան։

*) Ցղի կինն սուրբ պիտի պահէ եւ միշտ պիտի յիշէ Չորեքմուտը, Ուրբթմուտը եւ կիրակմուտը, երբ ծնի, օգնութեան հասնին, եթէ չէ պահած, ծննդեան միջոցին «սատանէք կը քօմին, ճիկեարը հանին, կը տանին»։

Իրեք հարուր վացընըվեց հայրապետ,
Տասներկու դաս առաքեալ
Ազատեն քեզ չար աչքից, չար լեզուից,
Չար սհաթից, չար դանից. ազատող Աստուած ինքը ազատի։
Դուռը հիւանդին, էրդիկը ծննդկանին,
Չի վախենայ սիրտը փորին, մինչի գալոց Քրիստոսին։
Չար աչքը չար փուշ. չար փուշը կրակ, կրակ անատական ծովը։

11.

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ.

Նորգուզայ բարբառով

Ո՞վ բարի լուսու Աստուած,
Շաղաթաթախ սուրբ Աւետեան,
Թէն, Քրիստոնէն ձեռ անօրանց ազատես։
Ո՞վ Կեալու սուրբ Խոդեց վանք. մեռնեմ քեզ։
Ո՞վ Աստուած, դիւ բարի ղսմաթ մի տաս,
Աստուած, բալից, փորձանքից ազատես։
Անմեղ լեզուից, կրակից, ջրուց ազատես,
Դիւ ճամարդի մուհթաճ չանես,
Դիւ քիւ տուած ողորմութիւնից անբաժին չանես,
Քիւ ստեղծած խոգին ժառութենով չառնես,
Քիւ ստեղծած խոգին չի կուրիսես.
Օրհնեալ տէր մեր, Յիսուս Քրիստոս, Աստուած,
Դիւ ճար արող էս, բաջպիր արող էս,
Աստուած, դիւ օղորմանաս,
Կը խնդրեմ, դիւ էրկէն ձեռ չկարճացուցես։